ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐԻ
ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

« 05 » Մայիսի 2026 N 106 - 26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի

«Պրեստիժ Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

05. 05.2026թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Պրեստիժ Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 30.12.2025թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-ԵԽ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «Պրեստիժ Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի իրականացվել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 20.04.2026թ.-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 667104.65 (վեց հարյուր վաթսունյոթ հազար հարյուր չորս դրամ, վաթսունհինգ լումա)ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 20.04.2026թ «Պրեստիժ ֆուդ» ՍՊԸ -ին ուղարկվել է համապատասխան ծանոցում և տրվել է 5 աշխատանքային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 77593.5 (յոթանասունյոթ հազար հինգ հարյուր ինսուներեք դրամ, հիսուն լումա) ՀՀ դրամ 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման 116390.25) հարյուր տասնվեց հազար երեք հարյուր ինսուն դրամ, քսանհինգ լումա) ՀՀ դրամը 900008000698 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում «Պրեստիժ Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման ապահովումների գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա » պարբերությամբ"

ՈՐՈՇԵՑԻ

1. «Պրեստիժ Ֆուդ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՏՆՕՐԵՆ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՀ, Երևան ✉ 375037 , Մ. Յաղուբյան 13,
էլ. հասցե՝ maryizmirlyan.childcarecenter@mlsa.am, հեռ.՝ 010201586